# ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ



Ավետարան ըստ Ղուկասի (15:11-32)

Նկարները՝ Անյա Ռոմանովսկայա

© 2022 hycatholic.ru



*Հիսուսը մի առակ է պատմում*
*գթասիրտ հոր ու նրա*
*անառակ որդու մասին:*



Երկու որդիներից կրտսերը,
իր հորից խնդրելով իրեն հասնող
բաժինը, հեռանում է տնից։



Նա, գնալով հեռու մի երկիր,
վատնում է իր ունեցվածքը ու
վերջում չքավոր դառնում:



Այն ժամանակ դիմում է այդ երկրի գյուղացիներից մեկին, որը նրան ուղարկում է խոզեր արածեցնելու:



Ապա խելքի գալով մտածում է,
որ լավ է զղջալ ու
իր հոր մոտ վերադառնալ:



*Կրտսեր որդին վեր կենում ու գնում է իր հոր մոտ, մտածելով, թե էլ արժանի չի որդի կոչվելու:*



Երբ հեռվից հայրը տեսնում է նրան,
վեր է կենում ու վազում ընդառաջ,
կրկում նրան ու համբուրում:



Որդին ասում է. «Հա՛յր, մեղանչեցի
երկնքի ու քո առաջ, և այլևս
արժանի չեմ քո որդին կոչվելու»:



*Հայրը անմիջապես լավագույն զգեստն է հագցնում նրան և ուրախությունից խնջույք է անում։*



Վերադառնում է ավագ եղբայրը ու նեղանում է հորից, որ ընդունել է այդ իր անառակ որդուն:



*«Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես,*
*և այն ամենը, ինչ իմն է՝ քոնն է,*
*բայց պետք էր ուրախանալ և ցնծալ,*
*որովհետև քո այս եղբայրը մեռած էր*
*և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:*

Բարի գալուստ hycatholic.ru: Մեր սկզբունքներն են հավատքը, սերն առ Աստված և մերձավորը, հաճախակի աղոթելը, քրիստոնեական արժեքներով ու Աստվածահաճո կյանքով ապրելը: